

«Քրդական կառավարութիւնը խորհեցաւ. թէ ի՞նչպէս կարելի պիտի դառնայ իրեն համար կեդրոնական ուժ հաստատել Քիւրդիստանի մէջ՝ յղացաւ հետեւեալ ծրագիրը :

Քրդական անկանոն բանակներ կազմելու միջոցով հարուած տալ Քրդական ցեղերուն, և թրքական բանակը այս կերպով Ռուսիոյ դէմ զօրացնել, ու դաւաղրական մեքենայութեամբ (conspiration) ուսական ժառանգական թշնամութեան արգելք մը դարձնել :

Ծրագիրը կազմած է Գօյց փառան:

Այս ծրագրի գործադրութիւնը այնքան խղճուկ եղաւ, ինչպէս անոր գաղափարն էր: Թիւրքիոյ մէջ ամեն մարդ, թրքական փաշաներ, Եւրոպական հիւպատոսներ, ճանապարհորդներ, ինչպէս և բոլոր ներքին հանդամանքներ ճանչցողները անկեղծօրէն կ'արտայայտեն թէ, Համիտի բանակի կազմութիւնը ոչ միայն ջուր ծեծելու պէս բան մ'էր, այլև մեծ վրտանդ թրքական պետութեան գոյութեան համար՝ իր արեւելեան սահմաններուն վրայ, և արդէն խարազան մ'էր եղած քրիստոնեայ և մահմետական ժողովուրդներուն»:

Նկարագրելով անոնց հարստահարական գործունէութիւնը, կ'աւելցնէ. «Համիտիներու բանակը եղած է աւազակներու ընկերութիւն մը». «Եւ այս անկանոն բանակները պատերազմի ժամանակ ի՞նչ կ'ընեն, հարցուցի այդ վիճակէն լաւատեղեակ մարդու մը, «Անոնք տունը կը մնան, և երբ կանոնաւոր բանակը հեռացած է, երկիրը աւերակ կը դարձնեն» ըսաւ :

Այսչափը կը բաւէ Համիտիներու ղինուորական արժէքի մասին: Սահմանադրութենէն գրեթէ բաւական ժամանակ յետոյ, (1911. մարտ 15)՝ թիւրք թերթերը գրեցին. «Պէտք եղած տեղերը ծանուցուած է, որպէս զի Ուրֆայի մէջ կազմուած թեթև հեծկազօրքերը անհաւանդութեան պարագային՝ ենթարկուին բանտարկութեան և ուրիշ պատիժներու, որոնք նշանակուած են Սուլթանական իրատէսով վաւերացուած կանոնադրութեան մէջ. իսկ երբ այդպիսիները պատժապարտ